ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ, *Արևմտահայ իրականությունը ռուս հրապարակախոս Տ. Օլգենինի գնահատմամբ, Ե., Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2014, 112 էջ:*



Օտարազգի գրողներից և գիտնականներից շատերն են այցելել Արևմտյան Հայաստան: Սակայն նրանցից քչերն են իրենց տպավորություններն ու զգացողությունները այդքան ճշմարտացի հանձնել թղթին և ի պահ թողել սերունդներին: Այդպես է վարվել քսաներորդ դարասկզբի ռուս հայտնի հրապարակախոս, Պետերբուրգի «Новое время», ապա «Биржевые ведомости» թերթերի թղթակի Անտուան Բերեզովսկի-Օլգինսկին (կեղծանունը՝ Տ. Օլգենին):

Նրա գործունեության, հայացքների ու համոզմունքների, գրական ժառանգության վերաբերյալ մեզանում առաջին անգամ աշխատություն է պատրաստել և հրատարակել անվանի հետազոտող, բանասիրական գիտությունների դոկտոր Անուշավան Զաքարյանը: Նա հեղինակել է «Արևմտահայ իրականությունը ռուս հրապարակախոս Տ. Օլգենինի գնահատմամբ» արժեքավոր աշխատությունը: Այն բաղկացած է առաջաբանից, երկու գլուխներից, վերջաբանից և հավելվածից:

Ներածականում հեղինակը մեծապես կարևորում է ռուս հրապարակախոսի հայամետ գործունեության դերն ու արժեքը պատմական անառարկելի ճշմարտության բացահայտման և հաստատման գործում:

Տ. Օլգենինը ականատես է եղել Բալկանյան պատերազմին, եղել է Սերբիայում, Բուլղարիայում, Ալբանիայում, ապա 1913 թ. սկզբին ժամանել Կովկաս՝ Թիֆլիս: Այդ առիթով «Մշակ» լրագիրը նշում է, որ ռուս

լրագրողը Թիֆլիսից կուղևորվի Էջմիածին, որտեղ «կծանոթանա լուսավորչական հայերի կենտրոնական տաճարի և նրան կից հիմնարկությունների հետ... ապա կուղևորվի Վան և Թուրքահայաստանի ուրիշ վայրեր»: Հենց Թիֆլիսում էլ Օլգենինը որոշակի տպավորություններ և տեղեկություններ է ստանում արևմտահայերի վիճակի մասին:

1913 թ. հունվարի 15-ին Օլգենինը մեկնում է Երևան, իսկ մի քանի օր անց Էջմիածնի ճեմարանի թատերասրահում դասախոսություն է կարդում Բալկանյան պատերազմի մասին: Հունվարի վերջին նա ուղևորվում է Արևմտյան Հայաստան՝ շրջագայելու և ուսումնասիրելու հայաբնակ այն նահանգները, որոնք ենթակա էին եվրոպական հսկողության: Արևմտյան Հայաստանից գրած առաջին թղթակցությունը՝ «Քրդերի մեջ» վերնագրով, նա ուղարկել է Դիադինից: Հետագա բազմաթիվ թղթակցություններում ռուս հրապարակախոսը ականատեսի թարմ փաստերով ու զգացողություններով բացահայտեց արևմտահայ իրականության անմխիթար պատկերը՝ ցույց տալով, որ աշխարհում ոչ մի քաղաքակիրթ ժողովուրդ չի գտնվում այնպիսի ստրկական կացության մեջ, ինչպիսին է արևմտահայության վիճակը: Նրա թղթակցությունները, որոնց վերնագրերը բավական խոսուն են՝ «Անհույս և անլույս», «Անհետացող Հայաստանը», «Դամոկլյան սրի տակ» և այլն, վկայում են այն մասին, թե ռուս լրագրողը որքան լրջությամբ է արձագանքել իրողություններին և առկա զարգացումներին:

Դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Տ. Օլգենինը կանխատեսել էր, որ քրդերն ու թուրքական իշխանությունները առաջիկա պատեհ առիթի և հնարավորության դեպքում վերջ կտան Հայկական հարցին և արևմտահայության գոյությանը: Այս առումով, աշխատության էջերում մեջբերված են բազմաթիվ փաստեր ու վկայակոչումներ: Ունենալով զարմանալի իրատեսություն և հեռազգացողություն՝ ռուս գործիչը բացահայտել է այն վտանգը, որ երիտթուրքական իշխանությունների հետևողական քաղաքականությամբ արևմտահայության դեմ պատրաստվում է մի աննախընթաց հանցագործություն, որը մեծ ողբերգության կհանգեցնի:

Սույն աշխատությունը ևս մեկ անգամ համոզիչ փաստերով ապացուցում է, որ XX դ. սկզբին և մանավանդ Առաջին աշխարհամարտի

նախօրյակին Արևմտյան Հայաստանում ձևավորված հակահայկական տրամադրությունների մեջ առանձնահատուկ դեր էին խաղում քրդերը: Տասնամյակներ շարունակ քրդական ցեղերի շրջանում օսմանյան իշխանությունների տարած հակահայկական քարոզչության արմատավորումը տվել էր իր արդյունքները: Ոտից գլուխ զինված և ատելությամբ տոգորված քրդերը պատրաստ էին ամբողջությամբ բնաջնջելու հայությանը: Տ. Օլգենինը այս առումով բացառիկ տեղեկություններ է հաղորդում արևմտահայկական գավառներից, որոնք սպառիչ պատկերացում են տալիս ստեղծված մղձավանջային իրադրության վերաբերյալ: Ռուս հրապարակախոսը լիովին հասկացել էր, որ մի ամբողջ ժողովուրդ մնացել է առանց որևէ հույսի: Առանց չափազանցության, նա հետևյալ եզրահանգումն է անում. «Որտեղից և ինչպե՛ս օգնություն կհասնի այն ժողովրդին, որին սպառնում է մի այնպիսի կոտորած, որից կդողա ամբողջ աշխարհը» (էջ 80):

Ամփոփելով նշենք, որ Ա. Զաքարյանի աշխատությունը հույժ ինքնատիպ մի գործ է, որը նոր կողմերով է բացահայտում արևմտա-հայկական իրականության տխուր ու մռայլ պատկերը՝ ռուս մտավորականի հայեցվածքով: Գիտական շրջանառության մեջ են դրվել արժեքավոր նոր նյութեր, փաստեր ու դիտարկումներ: Օլգենինի հայանպաստ գործունեությունը դեռևս հայտնի չէ մեր ժողովրդի լայն հատվածներին (ցավոք՝ ներկայիս, բայց ամենևին էլ ոչ 1910-ական թթ. հայ մտավորականության, որը գիտեր և բարձր էր գնահատում նրան) ուստի սույն աշխատությունը որոշակի չափով լրացնում է այդ բացը:

Այս արժեքավոր գործը պետք է համարել հայ ժողովրդի հարգանքի և երախտագիտության տուրքը այն լուսավոր անհատի հիշատակին, որը բարդ, ծանր ու դժնդակ ժամանակներում խիզախեց լինել ու մնալ հոշոտվող արևմտահայության կողքին, իսկ նրա նամակները, թղթակցություններն ու հրապարակային ելույթները որոշակի ազդեցություն ունեցան Ռուսաստանի հասարակական կարծիքի և երկրի արտաքին քաղաքականության դրսևորումների վրա:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ա. Հ.
Պատմական գիտությունների թեկնածու